Հայրենակցուհիներ,

Այդ նպատակով է ահա որ՝ ներկայ կոչով, կը դիմենք Ձեզ։ Կը խնդրենք որ ամեն մի քաղաքի մէջ մեր ձեռնհաս սեռակիցները կազմակերպէին կանանց ժողովներ անխտիր բոլոր կուսակցութիւններէ և կրօնական դաւանանքներէ, որպէս զի այդ ժողովներու մէջ քննուէր և որոշուէր թէ ինչ կրնան ընել Ամերիկաբնակ Հայուհիները և որոնք են այսօրուան անյետաձգելի և հրամայական ձեռնարկները յօգուտ երկրաբնակ Հայ ժողովուրդի և իգական սեռի։

Ներկայիս հրապարակի վրայ գրուած է Ազատութեան կոչոյի խնդիրը։ Մենք հրապարակ կը բերենք երկրի համար համեստ թուով վարժուհիներ պատրաստելու հարցը։ Առաջարկ կայ կարօտ Հայ գիւղերուն ղրկել շարժական դպրոցներ։ Վերջին օրերս հարց յարուցուեցաւ Ամերիկաբնակ Հայ ուսանողներուն և ուսանողուհիներուն օգնելու մասին։ Ցանկութիւն կայ Պոլսոյ Աշխատանքի տան միջոցաւ Նոր աշխատանքի տուներ հիմնել երկրի մէջ. կան ուրիշ ծրագիրներ ևս, որոնց յիշատակումը ապագային կը թողունք։

Եռանդ, կամք և կապակցութիւն հարկաւոր է այս հանրօգուտ գործերը սկսելու և իրականացնելու համար։ Եռանդն ու կամքը, յարգելի Հայրենակցուհիներ, Ձեզ չի պակսիր անկասկած։ Մեզ բոլորիս կը պակսի կապակցութիւնը Հայուհիներու մէջ, այն շաղկապը, որը պիտի հանդիսանայ իրարու միացնող, մերձեցնող ոյժ լայնածաւալ գաղութներու ցրուած Հայ կիներու միջև։

Այս կոչը ընող կանանց խումբը, վստահ Ձեր համակրութեան վրայ, նախաձեռնութիւն յանձն առաւ, առաջարկել և հիմնադրել Ամերիկայի Հայուհիներու կապակցութիւնը իրարու միջոց մէկտեղ բերելու ցրուած ոյժերը և այդ շաղկապով ծառայեցնելու Գաղութի իգական սեռը այն մեծ կարիքներուն որոնց օրբանն է մեր սիրած Հայրենիքը։

Կը սպասենք Ձեր աջակցութեան և քաջալերական պատասխանին։

Հայուհիներու

Նախաձեռնող Մասնախումբ

18 Մայիս 1911
Նիւ Եորք

Mrs. N. AVEDISSIAN
217 Est 33rd Street
New York

---

digitised by A.R.A.R.@